

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1-2/25-NH/BAO

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

20 հունվարի 2025թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ Ակադեմիա), ի դեմս նախագահ Աշոտ Սերոբի Սադյանի, որը գործում է Ակադեմիայի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Վ. Համբարձումյանի անվ. Բյուրականի աստղադիտարան» ՊՈԱԿը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Արեգ Մարտինի Միքայելյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «ՀՀ ԳԱԱ «Վ. Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարան» ՊՈԱԿ-ի պահպանում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

- 1.1 Պայմանագրով Ակադեմիան պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեով նախատեսված 273 778 500 ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:
- 1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, իրականացվելիք գիտական հետազոտությունների (այսուհետ՝ Միջոցառումներ) ակնկալվող գիտական արդյունքները՝ դրանց որակական և քանակական ցուցանիշները, Ծրագրի նախահաշիվը, կատարողների մասին տեղեկությունները, առաջադրանքը և օրացուցային պլանը ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Ակադեմիան իրավունք ունի՝

- 2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,
- 2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու՝ Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,
- 2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,
- 2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝
 - 2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,
 - 2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),
 - 2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,
- 2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

- 2.2.1 Ակադեմիայի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,
- 2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,
- 2.2.3 Ակադեմիայի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 Ակադեմիան պարտավոր է՝

- 2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,
- 2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

- 2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,
- 2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Ակադեմիա հանձնել սահմանված ժամկետում,
- 2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,
- 2.4.3.1 բացառել Ծրագրի ֆինանսավորման ծավալը նվազելու պատճառաբանությամբ արդյունավետ աշխատող գիտական աշխատողների աշխատանքային պայմանների վատթարացումը,
- 2.4.3.2 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներից, անհրաժեշտության դեպքում, հատկացնել միայն անձնակազմ տեղափոխող ավտոբուսի (միկրոավտոբուսի) մեկ վարորդի աշխատավարձ և մեքենայի հետ կապված ծախսեր, այդ թվում՝ սպասարկման և վառելիքի ծախսերը,
- 2.4.3.3 Ծրագրի ֆինանսավորման նվազեցման մնացած մասը կատարել այլ ծախսերով նախատեսված ֆինանսական միջոցներից,
- 2.4.4 կատարել Ակադեմիայի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,
- 2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Ակադեմիա,
- 2.4.6 Ակադեմիա ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառնությունների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,
- 2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Ակադեմիա ներկայացնել հիմնավորում,
- 2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Ակադեմիայի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,
- 2.4.9 Ծրագրի ավարտից հետո Ակադեմիա ներկայացնել Միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,
- 2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Ակադեմիայի հնարավորությունը,
- 2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների

- կանոններին համապատասխան,
- 2.4.12 Պայմանագրով նախատեսված Միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2026 թվականի հունվարի 24-ը:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 273 778 500 ՀՀ դրամ:

4. Մշտադիտարկում

- 4.1 Ակադեմիան ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մշտադիտարկում՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:
- 4.2 Մշտադիտարկումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5. Վճարման կարգը և ժամկետները

- 5.1 Ակադեմիան Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:
- 5.2 Ակադեմիան Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի՝ ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

- 9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:
- 9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Ակադեմիա ներկայացված Ծրագրի հայտը:
- 9.3 Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Ակադեմիա

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

ք. Երևան, Մ. Բաղդամյան 24

Հ/հ՝ 900011024115

ՀՎՀՀ՝ 00005673

ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան

Նախագահ՝

(ստորագրություն)

Աշոտ Սերոբի Սարգսյան

Ծրագրի գիտական ղեկավար՝

(ստորագրություն)

Կազմակերպություն

ՀՀ ԳԱԱ «Վ.Համբարձումյանի անվ. Բյուրականի
աստղադիտարան» ՊՈԱԿ

0213, ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Բյուրական

Հ/հ՝ 900448000381

ՀՎՀՀ՝ 05000608

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Կազմակերպության տնօրեն՝

(ստորագրություն)

Արեգ Մարտիրոս Միքայելյան

Միքայելյան Արեգ Մարտիրոսի

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ**

Մենք՝ ներքոստորագրյալներս, Ակադեմիայի նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանը և Կազմակերպության տնօրեն Արեգ Մարտինի Միքայելյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել 20 հունվարի 2025թ. N 1-2/25-NH/BAO պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 273 778 500 ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

Ակադեմիա

Նախագահ՝

(ստորագրություն)

Աշոտ Սերոբի Սաղյան



Կազմակերպություն

տնօրեն՝

(ստորագրություն)

Արեգ Մարտինի Միքայելյան




ԱԿՆԿԱԼՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

«ՀՀ ԳԱԱ «Վ. Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարան» ՊՈԱԿ-ի պահպանում»
ծրագրի

Ակնկալվող արդյունք	Քանակ
ՄԳՇ-ում (Միջազգային գիտատեղեկատվական շտեմարան) հրապարակում՝	20
Այլ պարբերականում հրապարակում՝	30
Գրքեր, մենագրություններ՝	2
Գիտաժողովի նյութեր՝	10

Կազմակերպության տնօրեն՝



(ստորագրություն)

Արեգ Մարտիրոսի Սիբայելյան

Կազմակերպության գիտքարտուղար՝


(ստորագրություն)

Արամիամյան Հայկ Վրդովայի




ՆԱԽԱՀԱՅԻՎ

«ՀՀ ԳԱԱ «Վ. Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարան» ՊՈԱԿ-ի պահպանում»
ծրագրի

ՀՀ դրամ


Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման չափը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1.	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	221 529 000	44 305 800	55 382 250	55 382 250	66 458 700
2.	տնտեսական ծախսեր՝	24 200 000	4 840 000	6 050 000	6 050 000	7 260 000
3.	այլ ծախսեր՝	28 049 500	5 609 900	7 012 375	7 012 375	8 414 850
Ընդամենը՝		273 778 500	54 755 700	68 444 625	68 444 625	82 133 550

Կազմակերպության տնօրեն՝


(ստորագրություն)

Արեգ Մարտիրոս Միքայելյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝


(ստորագրություն)

Վահագն Սերյոժայի Բաղդասարյան



ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

ՀՀ դրամ


Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը
	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	24 200 000
1.	էլեկտրաէներգիայի ծառայություն	11 000 000
2.	գազի ծառայություն	6 000 000
3.	ջրամատակարարման ծառայություն	0
4.	կապի ծառայություն	2 000 000
5.	աղբահանություն	400 000
6.	տրանսպորտային ծախսեր (վառելիք՝ բենզին և դիզել, պահեստամասեր և այլ տրանսպորտային ծախսեր)	4 800 000
	Այլ ծախսեր, այդ թվում՝	28 049 500
1.	Սարքեր, սարքավորումներ (համակարգչային, դիտողական և այլ)	11 000 000
2.	Նյութեր (տնտեսական, շինարարական, գրասենյակային, սարքերի հետ կապված սպառվող նյութեր և այլ)	9 400 000
3.	Գործուղումներ	1 500 000
4.	Գիտական միջոցառումների կազմակերպում	2 000 000
5.	Հրատարակման ծախսեր	2 500 000
6.	Այլ	1 649 500

Կազմակերպության տնօրեն՝



(ստորագրություն)

Արեգ Մարտիրոսի Միքայելյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝


(ստորագրություն)

Կանյան Սերյոժայի Բադալյան



ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ
«ՀՀ ԳԱԱ «Վ. Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարան» ՊՈԱԿ-ի պահպանում»
ծրագրի

A - ամսական աշխատավարձ (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները) D - աշխատաժամանակի շաբաթական տևողություն (ժամ)
B - ամիսների քանակ E - գումարային
C - աշխատաժամանակի ռեժիմ

ՀՀ դրամ

ազգանուն անուն հայրանուն	պաշտոն	A	B	C	D	E
Վարչասպասարկող անձնակազմ						
Միքայելյան Արեգ Մարտինի	տնօրեն	625 000	12	հիմնական	40	7 500 000
Աբրահամյան Հայկ Վոլոդյայի	փոխտնօրեն	500 000	12	հիմնական	40	6 000 000
Դանիելյան Հակոբ Սանասարի	տնօրենի ընդհանուր հարցերով խորհրդական	130 000	12	համատեղություն	20	1 560 000
Զոհրաբյան Մայրանուշ Հայկի	անձնակազմի կառավարման բաժնի վարիչ	260 000	12	հիմնական	40	3 120 000
Ավագյան Աննա Արմենի	անձնակազմի կառավարման բաժնի վարիչի օգնական	0	12	հիմնական	0	0
Բադալյան Վանյա Սերյոժայի	գլխավոր հաշվապահ	260 000	12	հիմնական	40	3 120 000
Գասպարյան Գայանե Գրիշայի	ավագ հաշվապահ	215 000	12	հիմնական	40	2 580 000
Գևորգյան Սյուզաննա Ստեփանի	հաշվապահ / գանձապահ	160 000	12	հիմնական	40	1 920 000
Գաբրիելյան Վազգեն Վահեի	ավագ ինժեներ-հետազոտող	0	12	համատեղություն	10	0
Գրավե Ալեքսեյ Նիկոլայի	բաժնի ղեկավար	0	12	հիմնական	40	0
Մկրտչյան Արտյոմ Արմենի	ճարտարագետ	69 000	12	համատեղություն	20	828 000
Միքայելյան Գոռ Արեգի	բաժնի ղեկավար	0	12	ներքին համատեղություն	30	0
Անդրեասյան Դերենիկ Հարությունի	համակարգչային ինժեներ	0	12	ներքին համատեղություն	20	0
Անդրեասյան Արշալույս Հարությունի	համակարգչային ինժեներ	103 500	12	հիմնական	30	1 242 000
Հարությունյան Վարսիկ Լևոնի	գրադարանի վարիչ	35 000	12	ներքին համատեղություն	10	420 000
Շահբազյան Գարունիկ Մնացականի	գրադարանավարուհի	60 000	12	հիմնական	20	720 000
Բալեյան Գայանե Դերենիկի	բաժնի ղեկավար	172 500	12	հիմնական	30	2 070 000
Դավթյան Անի Խաչատուրի	միջոցառումների և նախագծերի համակարգող	160 000	12	հիմնական	40	1 920 000
Դարբինյան Լիլիթ Սիմոնի	սոցիալական ցանցերի էջերի պատասխանատու, հանրային ծրագրերի համակարգող	75 000	12	համատեղություն	20	900 000
Հարությունյան Վարսիկ Լևոնի	այցելությունների համակարգող	160 000	12	հիմնական	40	1 920 000
Սուքիասյան Անուշ Զարակիկի	ՎՋ Համբարձումյանի տուն-թանգարանի ֆոնդապահ	120 000	12	հիմնական	40	1 440 000

Փիլիպոսյան Փիրուզա Գագիկի	ՎՃՀ Համաթափման տու- թանգարանի այցելվար	120 000	12	հիմնական	40	1 440 000
Հովհաննիսյան Ռուզաննա Սերյոժայի	կոնֆերանս-դահլիճի և ճաշարանի պատասխանատու	75 000	12	հիմնական	30	900 000
Ալեքսանյան Արսեն Միշայի	հյուրատան պատասխանատու	70 000	12	ներքին համատեղություն	20	840 000
Հարությունյան Սյուզաննա Լևոնի	բուժքույր	30 000	12	հիմնական	10	360 000
Սարգսյան Հենրիկ Երեմի	առաջատար ինժեներ, 1մ աստղադիտակի պատասխանատու	134 250	12	հիմնական	30	1 611 000
Բալեյան Գայանե Դերենիկի	կրթական ծրագրեր համակարգող	37 500	12	ներքին համատեղություն	10	450 000
Դատումյան Հենրիկ Մկրտչի	ինժեներ էլեկտրիկ	89 500	12	հիմնական	20	1 074 000
Խաչատրյան Արմեն Գնելի	ավագ ինժեներ-մեխանիկ	179 000	12	հիմնական	40	2 148 000
Պետրոսյան Աշոտ Աղվանի	գլխավոր ինժեներ, ինժեներատեխնիկական անձնակազմի ղեկավար	250 000	12	հիմնական	40	3 000 000
Ռոստոմյան Ռուբիկ Յուրիի	ավագ էլեկտրիկ	140 000	12	հիմնական	40	1 680 000
Գրիգորյան Սամվել Վարդգեսի	ավագ տեխնիկ	27 500	12	ներքին համատեղություն	10	330 000
Հովհաննիսյան Էդգար Հովիկի	ավագ տեխնիկ	152 500	12	հիմնական	40	1 830 000
Մովսիսյան Գագիկ Մուշեղի	ֆրեզերող-մետաղամշակող	26 000	12	հիմնական	10	312 000
Մովսիսյան Մարատ Մուշեղի	խառատ-մետաղամշակող	26 000	12	հիմնական	10	312 000
Սարգսյան Կարեն Հենրիկի	տեխնիկ	25 000	12	հիմնական	10	300 000
Ալեքսանյան Միշա Օնիկի	տնտեսական մասի ղեկավար	250 000	12	հիմնական	40	3 000 000
Ալեքսանյան Արսեն Միշայի	պահակապետ	127 500	12	հիմնական	30	1 530 000
Առաքելյան Լիաննա Հրաչյայի	պահեստապետ	90 000	12	հիմնական	30	1 080 000
Խաչատրյան Աշոտ Ալեքսանի	վարորդ-մեխանիկ	150 000	12	հիմնական	40	1 800 000
Հարությունյան Ալբերտ Հայկազի	վարորդ	65 000	12	հիմնական	20	780 000
Գասպարյան Արամ Սոսի	սանտեխնիկ	110 000	12	հիմնական	40	1 320 000
Դավթյան Միքի Խաչատուրի	հյուսն	105 000	12	հիմնական	40	1 260 000
Առաքելյան Վաչագան Արշալույսի	այգեպան-բանվոր	100 000	12	հիմնական	40	1 200 000
Խաչատրյան Սուրեն Անդրանիկի	այգեպան-բանվոր	104 000	12	հիմնական	40	1 248 000
Հովհաննիսյան Մասիս Գագիկի	բանվոր	100 000	12	հիմնական	40	1 200 000
Մկրտչյան Հովիկ Սամվելի	բանվոր	104 000	12	հիմնական	40	1 248 000
Առաքելյան Էդգար Հրաչյայի	պահակ	104 000	12	հիմնական	40	1 248 000
Բավդյան Պողոս Մանուկի	պահակ	104 000	12	հիմնական	40	1 248 000
Խաչատրյան Գագիկ Սամվելի	պահակ	104 000	12	հիմնական	40	1 248 000
Շահբազյան Հրայր Մնացականի	պահակ	100 000	12	հիմնական	40	1 200 000
Առաքելյան Հրաչյա Ամատունու	պահակ	100 000	12	հիմնական	40	1 200 000
Թադևոսյան Արտակ Սուրենի	պահակ	100 000	12	հիմնական	40	1 200 000
Խաչատրյան Արթուր Գրիգորի	պահակ	104 000	12	հիմնական	40	1 248 000
Մկրտչյան Հարություն Վարդգեսի	պահակ	100 000	12	հիմնական	40	1 200 000
Գևորգյան Գևորգ Համլետի	պահակ	100 000	12	հիմնական	40	1 200 000

Թաղևոսյան Սերժիկ Արամայիսի	պահակ	100 000	12	հիմնական	40	1 200 000
Հովհաննիսյան Կառլեն Ժորայի	պահակ	100 000	12	հիմնական	40	1 200 000
Սարգսյան Աշոտ Վաղարշակի	պահակ	100 000	12	հիմնական	40	1 200 000
Ալեքսանյան Ժիրայր Օնիկի	պահակ	100 000	12	հիմնական	40	1 200 000
Խաչատրյան Հովհաննես Աշոտի	պահակ	104 000	12	հիմնական	40	1 248 000
Հարությունյան Լևոն Սերոժի	պահակ	100 000	12	հիմնական	40	1 200 000
Ռոստոմյան Արման Ռուբիկի	պահակ	104 000	12	հիմնական	40	1 248 000
Նազարյան Գնել Ռազմիկի	ՍՅՊետերբուրգի կայանի պահակ	50 000	12	հիմնական	20	600 000
Մկրտչյան Սամվել Սարիբեկի	պահակ	50 000	12	հիմնական	40	600 000
Մկրտչյան Հրաչյա Գերասիմի	պահակ	100 000	12	հիմնական	40	1 200 000
Հակոբյան Անգին Սեդրակի	հավաքարար	105 000	12	հիմնական	40	1 260 000
Հարությունյան Ռուզաննա Համլետի	հավաքարար	78 000	12	հիմնական	30	936 000
Սահակյան Էվելինա Զալիբեկի	հավաքարար	75 000	12	հիմնական	30	900 000
Մանուկյան Կարինե Ռոբերտի	հյուրանոցի հավաքարար	52 000	12	հիմնական	20	624 000
Հարությունյան Սիրվարդ Սերյոժայի	Սարավանդի հավաքարար	75 000	12	հիմնական	30	900 000
Գևորգյան Սյուզաննա Ստեփանի	գնումներ համակարգող	37 500	12	ներքին համատեղություն	10	450 000
Գրիգորյան Սամվել Վարդգեսի	էլեկտրիկ-մեխանիկ	140 000	12	ներքին համատեղություն	40	1 680 000
Ֆարմանյան Սոնա Վարդանի	Տուրիզմի մենեջեր	40 000	12	ներքին համատեղություն	10	480 000
Գիտական անձնակազմ						
Բաժին Աստղագիտական շրջահայություններ						
Միքայելյան Արեգ Մարտինի	Ղեկավար	0	12	հիմնական	40	0
Գիգոյան Կամո Սերյոժայի	Ավագ գիտաշխատող	343 000	12	հիմնական	40	4 116 000
Աբրահամյան Հայկ Վոլոդյայի	Գիտաշխատող	0	12	հիմնական	40	0
Կոստանդյան Գայանե Ռազմիկի	Գիտաշխատող	275 000	12	հիմնական	40	3 300 000
Պարոնյան Գուրգեն Մեխակի	Գիտաշխատող	275 000	12	հիմնական	40	3 300 000
Միքայելյան Գոռ Արեգի	Գիտաշխատող	137 500	12	հիմնական	20	1 650 000
Գասպարյան Աննա Արթուր	Կրտսեր գիտաշխատող	210 000	12	հիմնական	40	2 520 000
Մկրտչյան Վարդուհի Խորենի	Ավագ լաբորանտ	134 250	12	հիմնական	30	1 611 000
Խումբ Բարձր արագությամբ աստղերի որոնում և ուսումնասիրություն						
Ղազարյան Սաթենիկ Անդրանիկի	Գիտաշխատող	275 000	12	հիմնական	40	3 300 000
Համբարձումյան Լիանա Աշոտի	Գիտաշխատող	275 000	12	հիմնական	40	3 300 000
Գիգոյան Կարեն Կամոյի	Կրտսեր գիտաշխատող	210 000	12	հիմնական	40	2 520 000
Բաժին Անկայուն երևույթներ						
Հարությունյան Հայկ Ավագի	Առաջատար գիտաշխատող	443 000	12	հիմնական	40	5 316 000
Նիկողոսյան Ելենա Համլետի	Առաջատար գիտաշխատող	443 000	12	հիմնական	40	5 316 000
Ազատյան Նաիրա Մուշեղի	Գիտաշխատող	275 000	12	հիմնական	40	3 300 000
	Կրտսեր գիտաշխատող			հիմնական		


Անդրեասյան Դերենիկ Հարությունի		105 000	12		20	1 260 000
Խաչատրյան Արման Աշոտի	Ավագ լաբորանտ	44 750	12	համատեղություն	10	537 000
Մարինե Թորոսյան Հովհաննեսի	Ավագ լաբորանտ	44 750	12	համատեղություն	10	537 000
Բաժին Երիտասարդ աստղային օբյեկտներ						
Մաղաքյան Տիգրան Յուրիի	Գլխավոր գիտաշխատող	552 000	12	հիմնական	40	6 624 000
Մովսիսյան Տիգրան Հակոբի	Առաջատար գիտաշխատող	443 000	12	հիմնական	40	5 316 000
Անդրեասյան Հասմիկ Ռուբենի	Գիտաշխատող	0	12	հիմնական	10	0
Բաժին Աստղաքիմիա, աստղակենսաբանություն և արտարեգակնային մոլորակներ						
Եղիկյան Արարատ Գևորգի	Առաջատար գիտաշխատող	443 000	12	հիմնական	40	5 316 000
Սամսոնյան Անահիտ Լյովայի	Կրտսեր գիտաշխատող	275 000	12	հիմնական	40	3 300 000
Շամյար Սամա Ալի	Ավագ լաբորանտ	44 750	12	համատեղություն	10	537 000
Գրիգորյան Վարդգես Միքի	Ավագ լաբորանտ	44 750	12	համատեղություն	10	537 000
Բաժին Ակտիվ գալակտիկաներ						
Անդրեասյան Ռուբեն Ռաֆիկի	Առաջատար գիտաշխատող	443 000	12	հիմնական	40	5 316 000
Հակոբյան Սուսաննա Ավետիսի	Ավագ գիտաշխատող	343 000	12	հիմնական	40	4 116 000
Մահտեսյան Արախամ Պողոսի	Ավագ գիտաշխատող	343 000	12	հիմնական	40	4 116 000
Սուքիասյան Անդրանիկ Գևորգի	Կրտսեր գիտաշխատող	210 000	12	հիմնական	40	2 520 000
Բաժին Տեսական աստղաֆիզիկա						
Նիկողոսյան Արթուր Գարեգինի	Գլխավոր գիտաշխատող	552 000	12	հիմնական	40	6 624 000
Հակոբյան Աշոտ Աղաբեկի	Ավագ գիտաշխատող	343 000	12	հիմնական	40	4 116 000
Բաժին Բարձր էներգիաների աստղաֆիզիկա						
Տեր-Ղազարյան Գագիկ	Գլխավոր գիտաշխատող	552 000	12	հիմնական	40	6 624 000
Պիկիցյան Հովհաննես Վահրամի	Ավագ գիտաշխատող	343 000	12	հիմնական	40	4 116 000
Բաժին Տիեզերական կոմպակտ օբյեկտներ և ռելատիվիստական գրավիտացիա						
Հարությունյան Արուս Սլավիկի	Ավագ գիտաշխատող	343 000	12	հիմնական	40	4 116 000
Բաղդասարյան Դանիել Սուրենի	Գիտաշխատող	68 750	12	համատեղություն	10	825 000
Բաժին Պատմամշակութային աստղագիտություն						
Մալխասյան Հայկ Անդրանիկի	Գիտաշխատող	275 000	12	հիմնական	40	3 300 000
Դավթյան Արմեն Արգամի	Գիտաշխատող	68 750	12	համատեղություն	10	825 000
Ֆարմանյան Սոնա Վարդանի	Կրտսեր գիտաշխատող	105 000	12	համատեղություն	20	1 260 000
Բաժին Գիտական խորհրդատուներ						
Պարսամյան Էլմա Սուրենի	Առաջատար գիտաշխատող	443 000	12	հիմնական	40	5 316 000
Լաբորատորիա Դիտողական աստղագիտություն						
Գաբրիելյան Վազգեն Վահեյի	Ավագ ճարտարագետ	44 750	12	հիմնական	10	537 000
Գրավե Ալեկսեյ Նիկոլայի	Դեկավար	230 000	12	հիմնական	40	2 760 000

Լաբորատորիա Աստղաինֆորմատիկա						
Միքայելյան Գոռ Արեգի	Ղեկավար	172 500	12	ներքին համատեղություն	30	2 070 000
Անդրեասյան Դերենիկ Հարությունի	Ճարտարագետ	69 000	12	ներքին համատեղություն	20	828 000
Աշխատավարձային ֆոնդի մնացորդ՝						0
Ընդհանուր գումար՝						221 529 000


Կազմակերպության տնօրեն՝


(ստորագրություն)

Կազմակերպության անձնակազմի կառավարման
ստորաբաժանման ղեկավար՝


(ստորագրություն)

Արեգ Մարտիրոսի Միքայելյան



ԱՌԱՋԱԴՐԱԼՔ

«Անկայուն երևույթների դերը տիեզերական օբյեկտների էվոլյուցիայում» ծրագրի
(ծրագրի անվանումը)

1. **Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջե:**
2. **Աշխատանքի նպատակը** (1 պարբերություն): Աստղագիտության և նրա ժամանակակից կարևորագույն բաժնի՝ աստղաֆիզիկայի, հետազոտությունների նպատակն է տիեզերական մարմինների, նրանց հետ կապված երևույթների շարունակական ուսումնասիրությունների միջոցով բացահայտել նոր առանձնահատկություններ և օրինաչափություններ՝ ստանալով Տիեզերքի և նրա էվոլյուցիայի վերաբերյալ առավել խորացված պատկերացում: Աշխատանքի նպատակն է աստղաֆիզիկական դիտողական, վիճակագրական և տեսական հետազոտությունների միջոցով բացահայտել Տիեզերքի, այն է՝ տիեզերական մարմինների և տիեզերական երևույթների, մի շարք առանձնահատկություններ, մասնավորապես՝ անկայուն երևույթների բնույթը և օրինաչափությունները: Աստղաֆիզիկական որպես հետազոտությունների բնագավառ հիմնվում է դիտումների արդյունքների վրա, բոլոր տեսական մոդելները և եզրակացությունները վերջին հաշվով ստուգվում, հաստատվում կամ մերժվում են միայն դիտման արդյունքների հետ համեմատելու միջոցով: Դա իր հերթին շատ խիստ պահանջներ է դնում դիտումների իրականացման պայմանների վրա: Ակնհայտ է, որ առավել խոր եզրահանգումները պահանջում են ինչպես դիտողական սարքավորումների ճշտության աճ ու դիտման տիրույթների ընդլայնում, այնպես էլ քննարկվող խնդիրների ավելի խոր հետազոտություն: Մեծ ծավալի տեղեկատվությունը պահանջում է դրա մշակման օրինաչափություններ՝ մանրակրկիտ գիտական հետազոտությունների իրականացման համար: Էլեկտրամագնիսական ալիքների սպեկտրի բոլոր տիրույթներում տեղեկատվություն է ստացվում տիեզերական օբյեկտներում տեղի ունեցող անկայունության դրսևորումների վերաբերյալ: Անկայունության այդ դրսևորումները, ըստ էության, հիմնական դերն են կատարում այդ օբյեկտների էվոլյուցիայի հետ կապված գործընթացներում: Սույն ծրագրի շրջանակներում ուսումնասիրվում են վերոհիշյալ երևույթներն ու դրանց ազդեցությունը էվոլյուցիոն գործընթացների վրա:
3. **Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները** (մինչև 1 էջ): Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջն է ժամանակակից մակարդակով իրականացնել «Անկայուն երևույթների դերը տիեզերական օբյեկտների էվոլյուցիայում» գիտական թեմատիկայի շրջանակներում դրված խնդիրները՝ տիեզերական անկայուն երևույթների

ուսումնասիրությունը և ստանալ միջազգային մակարդակի գիտական արդյունքներ: Աստղաֆիզիկական գիտական տեղեկատվության հիմնական աղբյուրը դիտումներն են, որոնք կատարվում են էլեկտրամագնիսական ալիքների հնարավոր բոլոր տիրույթներում (այսպես կոչված՝ բազմալիքային աստղագիտություն, գամմայից մինչև ռադիո) և տեղեկատվության այլ կրիչներով (տիեզերական մասնիկներ, նեյտրինոներ, գրավիտացիոն ալիքներ, այսպես կոչված՝ բազմաստրոհանդակ աստղագիտություն, որը ներառում է նաև բազմալիքայինը): Ինչ վերաբերում է առաջնային գիտելիքին, ապա այդպիսիք են հադիսանում դիտումների արդյունքները: Դիտումների արդյունքները կիրառվում են Տիեզերքում տեղի ունեցող ֆիզիկական երևույթներում ծածկագրված օրինաչափություններն ի հայտ բերելու և դրանք մանրամասնորեն ուսումնասիրելու նպատակներին: Խնդիրներն իրենց էությամբ բավականին բարդ են և էապես կախված են դիտողական տվյալների հավաստիության մակարդակից: Այդ իսկ պատճառով անհրաժեշտություն է առաջանում օգտագործել առավել խոշոր աստղադիտակներով և ժամանակակից ձևափոխիչ սարքերով և լուսաընդունիչներով ու ժամանակակից եղանակներով ստացվող տվյալները: Բյուրականի աստղադիտարանը տնօրինում է միջազգային սանդղակով միջին չափի գործիքների, որոնցից 2.6 մետր հայելու տրամագծով աստղադիտակի արդիականացումը հիմնականում իրականացվել է 2014 թվականին և տարեցտարի շարունակվում է: Այսօր այդ գործիքը աշխատանքային վիճակում է, և իրականացվում են կանոնավոր դիտումներ, այդ թվում՝ միջազգային համագործակցությունների շրջանակում: Միաժամանակ, 2015թ.-ից վերաշահագործվել է նաև 1 մետրանոց Շմիդտի դասի աստղադիտակը: Աշխատանքային վիճակում են ևս 2 աստղադիտակ, թեև լիարժեք աշխատելու համար կարիք կա ժամանակակից ընդունիչ սարքերի: Այդ աստղադիտակները բարձրակարգ արդյունքներ կարող են տալ միայն օբյեկտների որոշակի (առանձնահատուկ) դասերի և որոշակի (նույնպես առանձնահատուկ) խնդիրների լուծման համար: Այդ իսկ պատճառով խիստ անհրաժեշտություն է առաջանում օգտագործել նաև ժամանակակից այլ աստղադիտակներ (թե՛ ցամաքային, թե՛ տիեզերական) կամ նրանցով այլ նպատակներով ստացված արդյունքներ, որոնք պահվում են դիտողական տվյալների պահոցներում: Նման մոտեցում անհրաժեշտ է, որպեսզի ապահովվի ժամանակակից հիմնարար գիտությանն առաջադրվող պահանջների իրականացումը, այն է՝ հրատարակվող արդյունքները պետք է ունենան հավաստիության բարձր մակարդակ և լինեն ստուգելի: Որպես սեփական դիտողական նյութի որակի աճի միջոց շարունակում է առաջնային պահանջների թվում մնալ դիտողական գործիքների արդիականացման, դրանք ժամանակակից լուսաընդունիչներով զինելու խնդիրը: Այդ իսկ պատճառով, բացի զուտ գիտական աշխատանքից, որը հետապնդում է հիմնարար արդյունքների ստացում, խիստ պահանջ է դրվում նաև դիտողական տեղեկատվության ստացման սեփական միջոցների արդիականացումն ապահովելուն:

4. **Աշխատանքի բովանդակությունը** (մինչև 3 էջ): Աստղաֆիզիկայի ժամանակակից պատկերացումների համաձայն, Տիեզերքի զանգված-էներգիայի 68.3%-ը կազմում է նրա ընդարձակման արագացումն ապահովող մութ էներգիան, 26.8%-ը՝ մութ (չդիտվող) նյութը և ընդամենը 4.9%-ը՝ բարիոնային (դիտվող) նյութը: Բարիոնային նյութի առավել կարևոր առանձնահատկություններից մեկն այն է, որ այն հիերարխիական կառուցվածք ունի բոլոր մակարդակներում: Մեզ համար հետազոտելի այդ նյութի կառուցվածքի հիմքում ընկած են նյութի ատոմական կազմությունը և այդ կազմության մեջ ատոմային միջուկների խիստ որոշակի և ուրույն հատկությունները: Այստեղ առավել մեծ կարևորություն է ներկայացնում այն, որ այդ նյութը հատկություն ունի ստեղծել զանազան տիեզերական օբյեկտներ, որոնք իրենց հերթին մտնում են հիերարխիայի ավելի բարձր մակարդակի համակարգերի մեջ և այդպես շարունակ: Ըստ որում, բարիոնային ցանկացած օբյեկտում կամ այդ օբյեկտներից կազմված համակարգում զանգվածի խտությունն առավել մեծ է կենտրոնական մասում և նվազում է դեպի եզրերը: Միկրոաշխարհում այդպիսի կառույցներ են հանդիսանում ատոմներն իրենց զանգվածի հիմնական մասը կրող միջուկներով: Տիեզերական օբյեկտների մոդելավորման ժամանակ շատ կարևոր է բարիոնային նյութի այդ հատկության ճշգրիտ հաշվառումը: Այն հանգամանքը, որ միջուկային նյութի ինքնակազմավորման ընթացքում տեղի է ունենում փուլային փոփոխություն և միջուկներում զանգվածի մի մասը վերանում է, ինչն արտահայտվում է զանգվածի պակասորդի ձևով և դառնում միջուկների կայունության միակ երաշխիքը, նոր հեռանկարներ է բացում նաև խոշոր ինքնագրավիտացվող օբյեկտների ներքին կառուցվածքի ըմբռնման տեսակետից: Ուստի Տիեզերքի խոշորագույն օբյեկտների առաջացման տեսություններ ստեղծելիս անհրաժեշտ է նկատի առնել, որ նրանց զանգվածի գերակշիռ մասը կուտակված է ատոմային միջուկներում, և որ ատոմային միջուկները կառուցված են զանգվածի պակասորդով: Հաջորդ մակարդակի այդ ատոմներից կազմված օբյեկտներն են, որոնք ունեն բավականին լայն տիրույթ, սկսած փոշեհատիկներից ու մինչև աստղեր: Բնականաբար այս մակարդակում առանձնահատուկ հետաքրքրության առարկա են մի կողմից մոլորակներն ու աստղերը, իսկ մյուս կողմից՝ փոշային ու գազային միգամածությունները: Դրանց ձևավորման ու էվոլյուցիայի խնդիրները միշտ էլ եղել են Բյուրականի աստղադիտարանի գիտական հետաքրքրությունների շրջանակներում: Տիեզերքի կառուցվածքի հաջորդ մակարդակի օբյեկտները կազմված են առաջին երկու մակարդակներին պատկանող օբյեկտներից: Դրանք են գալակտիկաներն ու, որոշակի իմաստով՝ աստղակույտերը: Գալակտիկաներն իրենք կազմում են գալակտիկաների խմբեր ու կույտեր, որոնց կազմում կարելի է գտնել նաև ավելի ցածր հիերարխիական մակարդակների պատկանող օբյեկտներ՝ առանձին աստղեր, ատոմական և մոլեկուլային գազ:

Սույն ծրագրով որպես հետազոտության հիմնական օբյեկտներ են ընտրված աստղերից մինչև գալակտիկաների կոյտեր: Աստղային և գալակտիկաների մակարդակներում անկայունության դրսևորումներն առավել ակնհայտ են և արձանագրման տեսակետից ավելի դյուրին: Դրանք հիմնականում արտահայտվում են պայթյունների, արտանետումների, արտահոսքերի, շիթերի, կանոնավոր պատկերների խոտորումների և այլ տեսքով: Գալակտիկաների կոյտերի դեպքում անկայունության դրսևորումները միջնորդավորված են և ավելի դժվար հայտնաբերվող, ուստի պահանջում են ավելի մեծ և՛ վիճակագրական, և՛ տեսական հետազոտություններ:

Բյուրականի աստղադիտարանում անկայուն երևույթների ու անկայուն օբյեկտների ուսումնասիրությունը սկսվել է աստղերի և դրանց համակարգերի անկայունության ուսումնասիրությամբ: Դրանք սկսվել են աստղադիտարանի հիմնադրման առաջին տարիներից՝ դեռևս 1940-ական թթ., և որոշ դեպքերում համաշխարհային աստղաֆիզիկան այդ բնագավառում սկսել է զարգանալ հենց բյուրականյան հետազոտությունների շնորհիվ և այն ուղղություններում, որտեղ Բյուրականում ստացվել են հիմնարար արդյունքներ: Ներկա հետազոտական ծրագրում շարունակվում են աստղային էվոլյուցիայի հատկապես առավել վաղ փուլերի հետազոտությունները, որոնք զուգակցվում են գազային շիթերի առաջացումով, շուրջաստղային միգամածությունների ձևավորմամբ, աստղերի պայծառության մշտական փոփոխականությամբ: Այն հարցը, թե որն է անկայունության և անկայունությունը պայմանավորող ավելցուկային էներգիայի աղբյուրը, ունի չափազանց մեծ կարևորություն, քանի որ դրանից է կախված աստղերի առաջացման և հետագա էվոլյուցիայի մեխանիզմը:

Վերջին տասնամյակների ընթացքում հատկապես տիեզերաբանական տեսակետից կարևոր նշանակություն է ստացել Գերնոր աստղերի ուսումնասիրությունը: Այս բնագավառն առաջին հերթին զարգանում է վիճակագրական հետազոտությունների ուղղությամբ, ինչը նպատակ ունի վեր հանել աստղային անկայունության ամենախոշոր դրսևորումների առանձնահատկությունները, որոնք կարող են պայմանավորված լինել ինչպես աստղերի ներքին հատկություններով, այնպես էլ արտաքին ֆիզիկական ազդեցությամբ: Այդ իսկ պատճառով հետազոտվում են տարբեր դասերի գալակտիկաներում դրանց ի հայտ գալու օրինաչափությունները:

Անկայունության արտահայտման տեսակետից բավականին նման խնդիրներ են առաջանում նաև գալակտիկաներում դիտվող ակտիվ երևույթների ուսումնասիրության և մեկնաբանման հետ կապված: Գալակտիկաների միջուկների ակտիվության վերաբերյալ նորագույն պարադիգմը նույնպես ձևավորվել և վերջնական տեսք է ստացել Բյուրականի աստղադիտարանում: Այսօր աշխարհի հայտնի բոլոր աստղագիտական կենտրոններում այդ հետազոտական ուղղությունը համարվում է առավել խոստումնալից: Չնայած դրան, այդ ուղղությունն իրականում ենթարկվում է նաև զանազան փոփոխությունների, դրանով իսկ

հարմարեցվելով ավանդական տիեզերածնության պահանջներին, որոնցով ի սկզբանե ընդունելի չէր այդ գաղափարը: Սկզբունքային տարբերություններից մեկն այն է, որ բյուրականյան նախնական պարադիգմը ենթադրել և ենթադրում է, որ ակտիվությունը պայմանավորող էներգիայի աղբյուրը գտնվում է տվյալ օբյեկտի ներսում, այնինչ ձևափոխված ավանդական պատկերացումներն էներգիայի աղբյուրը տեղափոխում են օբյեկտի սահմաններից դուրս և ըստ էության վերագրում տիեզերաբանական Մեծ պայթյունին:

Ըստ ժամանակակից պատկերացումների, այդ մեխանիզմը էներգաարտադրության տեսակետից առավել արդյունավետ՝ սև խոռոչների վրա ակրեցիայի (նյութի ռելատիվիստական անկման) մեխանիզմն է, քանի որ ըստ հաշվարկների էներգիայի է վերածվում ընկնող նյութի 10%-ից ավելին: Սակայն սև խոռոչների տեսությունն իրականում հանդիպում է լուրջ դժվարությունների և որոշակի իմաստով ներքին հակասականություն ունի: Սույն հետազոտական ծրագրի ներկա փուլը նախատեսում է նաև այս խնդրի ավելի խորացված հետազոտություն, ելնելով բացառապես ֆիզիկական պատկերացումներից և հաշվի առնելով, որ Տիեզերքում նյութը հանդես է գալիս հիերարխիական կառուցվածքով, ինչը պետք է հաշվի առնել նման խնդիրների քննարկման դեպքում: Հաշվի է առնվում նաև այն, որ առավել մեծ խտությամբ օբյեկտներում, որոնք աստոմային միջուկներն են, գոյություն ունի երևույթ, որը կոչվում է զանգվածի պակասորդ, ինչը երբեք հաշվի չի առնվում գրավիտացիայի հավասարման լուծման ժամանակ:

Այսպիսով, Բյուրականի աստղադիտարանում կատարվող հետազոտություններն ընդհանրապես և ներկա ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքները մասնավորապես, էական դեր ունեն տիեզերական մարմինների և երևույթների ֆիզիկան և էվոլյուցիան հասկանալու գործում: Աշխատանքի ընթացքում ճկուն կերպով համադրվելու են երկու հակադիր մոտեցումները, ինչի շնորհիվ էլ հնարավոր կդառնա երևույթների իրական պատկերի կառուցումը և դրանց վերաբերյալ ճիշտ բացատրություններ ստանալը:

Կազմակերպության
տնօրեն (ռեկտոր)

Ծրագրի գիտական ղեկավար՝




(ստորագրություն)

(Արեգ Միքայելյան)
(անուն ազգանուն)


(ստորագրություն)

(Արեգ Միքայելյան)
(անուն ազգանուն)

N 1-2/25- NH/BAO

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ *

«Անկայուն երևույթների դերը տիեզերական օբյեկտների էվոլյուցիայում» ծրագրի
(ծրագրի անվանումը)

h/h	Իրականացվելիք միջոցառման			
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	կատարման ժամկետները
1	Փուլ 1	Աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ պայմանների և նախադրյալների ստեղծում և տեղեկատվության հավաքագրում	Քննարկվող խնդիրների համար անհրաժեշտ գրականության և սեփական տեղեկատվական նյութերի նախապատրաստում	31.03.2025
2	Փուլ 2	Առկա հասանելի տեղեկատվության նախնական ուսումնասիրություն, մշակում և վերլուծություն	Առաջնային հում նյութի ձևափոխում աստղաֆիզիկական տեղեկատվության՝ մեծությունների և պարամետրերի	30.06.2025
3	Փուլ 3	Հաշվարկներ, տեսական ընդհանրացումներ, եզրակացություններ և ստացված արդյունքների քննարկում	Արդյունքների ֆիզիկական բնույթի քննարկում, դրանց համեմատություն նման խնդիրների հայտնի վերլուծությունների և լուծումների հետ	30.09.2025
4	Փուլ 4	Արդյունքների և եզրակացությունների ձևակերպում և համապատասխան ընդհանրացումներ	Գիտական հոդվածների, զեկուցումների և հաշվետվությունների պատրաստում	31.12.2025

Կազմակերպության
տնօրեն (ունկտոր)



Ծրագրի գիտական ղեկավար՝


(ստորագրություն)

(Արեգ Միքայելյան)
(անուն ազգանուն)


(ստորագրություն)

(Արեգ Միքայելյան)
(անուն ազգանուն)

* Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով: